# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » դեկտեմբերի 2025թ. Ն ՄՈ/1033-Ա

ք. Արմավիր

### «ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 8-ի Ն ՄՈ/1021-Ա որոշումը, «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ա.Հակոբյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Սիրվարդ Ավոյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ա.Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և

արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ (Ա.Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2025 թվականի դեկտեմբերի 15-ի

N ԱՄՈ/1033-Ա որոշման

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ա.Հակոբյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության պետ

**Անդամներ՝**

Ս.Սաֆարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Ա.Վասիլյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**

Ա. Գրիգորյան- «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

**Ընդունող՝**

Ա.Քալաշյան — «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**